որ իջեալ ՚ի յերկնից բաշխի ՚ի միջի մերամ . առ է  
կեռծք, յայս, յարութիւն, քաւութիւն և թու-

զութիւն մեղաց, . ՚ի խոհրդապէտը ։

Նշրորդ՝ սրբարար այս խորհուրդ շնորհէ արժանաւոր հաղորդելոցն ընտանեքար հոգւով յարակցիլ ընդ ՚Քրիստոսի Յիսուսի ։ ըստ այնմ, «Ակ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիսքնակեացի, և ես ՚ի նմա», Յօհէ ։ զ ։ 57։

«Ի՞աժակն օրհնութեան՝ զոր օրհնեմք՝ ոչ ապաքէն հաղորդութիւն է արեանն ՚Քրիստոսի ։ հայն զոր բեկանեմք՝ ոչ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն ՚Քրիստոսի», ա կորնթ ։ ծ ։ 16։

Ի վերայ այսր բնաբանի իմաստասիրէ սուրբն Յովհան ոսկեբերան, «Ակրպէս այն մարմին միաւորեալ է ընդ ՚Քրիստոսի, նոյնպէս և մեք խորհրդական հացիւն այս ընդ ՚Քրիստոսի յօդիմք»։

Սուրբն խոսրով անձեացեաց եպիսկոպոս գրէ ՚ի մեկնութեան պատարագի ։ «Հաղորդութիւն կոչէ, զի կցորդի նա մեզ և մեք նմա, և թէ՝ «Հաւատամք և փրկական խորհուրդն ստուգապէս մարմին և արիւն ՚Քրիստոսի, որով միանամք ՚ի ՚Քրիստոս և ժառանգակից լինիմք»։

«Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ առտանօր յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց, Պատուածիսկ լինիլ ընտրութեամք շնորհին, և ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ»։ Ա գրի ՚ի ՚արք ։ ծբ ։

Հարցումն առնե Հեղինակն . Ը արժական սե-  
ղանի վերայ հարելի՞ է պատարագ մտառցանել :  
Առանց ուշադիր լինելոյ եկեղեցական պատմուեց  
հանոնաց նախնի հարց մերոց և այլոց ազգաց  
քրիստոնեց , տայ պատաժանի ասելով . Այս և  
այս սովորութիւնը շատ հին է ամենայն եկեղե-  
ցեաց մէջ . էբե 4 :

Խըրք սրչեօք ամենայն եկեղեցիք ուղղափառաց  
շարժական սեղան ունիլ սովորեցան և արտաքոյ  
օծեալ և աստուածաբնակ տաճարին պատարա-  
գել սահմանեցին . միթէ արտաքոյ խորհրդական  
ածընկալ յարկի սրբութեան պատարագամատոյց  
քահանայն կարէ համարձակիլ զայս փառաբանու-  
թիւնս առնել յասելն . Այ յարկի սրբուե և ՚ի  
տեղուջս փառաբանութեան հրեշտակաց բնակա-  
րանիս և մարդկան քաւարանիս , առաջի ածընկալ  
և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սե-  
ղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք :

Յեկեղեցական սահմանադրութիւնս հարց  
սրբոց գտանին արդեօք յիշատակութիւնք  
ինչ շարժական սեղանոյ . ընթերցուք զաս-  
տուածաբանութիւն սրբոյն Դիմոնէսիոսի ա-  
րիսպագացւոյն , զոր սուրբն Աերսէս լամբ-  
րոնացի առաջի առնե մեզ ՚ի բանս մեկնու-  
թեան պատարագի յասելն . Այրկին ՚ի յեր-

Կիր հաւատացաք գոլ զսուրք տունս . վասն  
այսորինկ և 'ի տիտ կայանի երկնաւորացն ձեւա  
փերպեցաւ պատկեր սորա . ըստ որում ուսեալ  
յառաքելոցն սուրբն Ախոնէ ոխս աւանդէ, մեզ այս  
պէս : քանզի նոքա, ասէ, Երսնելիքն առաքեալք,  
անմարմնապէս մաքրութեամբ յերկրի հուռ գո-  
լով հրեշտակաց՝ կարօղ եղեն զերկնայինցն կար  
քաւորութիւն մաքրուր մատօք ճանաչել, եւ 'ի  
ձեռն միջնորդութեան և գրոյ բանի աշակերտաց  
իւրեանց աւանդել: Այս զի անկար էր մարմնաւո-  
րացս և աշխարհի վիճակելոց զվերնականացն  
գիտութի նոցա նմանաբար ուսանել, կարեոր հա-  
մարեցան մարմնական նշանակօք մեզ զնոյն տայ-  
որպէս զի ուսցուք զգալի պատկերօք զերկնայինս,  
և բազմազանութեամբ զծածուկան, և նիւթովք  
զաննիւթսն, և մերովքս զգերագոյնան, գրով և  
առանց գրոյ վարժեցին: Օ այս ասելով երանե-  
լոյս զարթուցանէ զմիտառ մեր իմանալ զեկեղեցի  
պատկեր երկնի, և զնարանն սուրբ և զսրբարարն  
բեմ աղացոյց մառաց աթուոյն Աստուծոյ, զորով  
շուրջ կան անընդմիջաբար աթուքն, քերովիքն  
և սէրովիքն:

Ուրեմն ռեզզամառ աւրբ եկեղեցին չումի  
առանցեալ սովորութիւն շարժական սեղանոյ  
Առաքելոց և յառաքելադատիւ հարց սրբոց  
զերհըշտական ողառաբազու անդ մատուցանել առ

տաքոյ օծեալ աստուածընկալ տաճարին :

“Եւ արդ՝ ՚ի ժողովին ձեզ ՚ի միախն ոչ  
է տունն Տեառն ձեզ տեղի հաց ուտելոյ . . .  
Այիթէ տունս ոչ ունիցիք ուտելոյ կամ ըմպե-  
լոյ . եթէ զեկեղեցեաւն Աստուծոյ արհամար-  
հիցէք . . ա կորնի . ժա . 20 . 22 :

“Դիտասցես, թէ որպէս պարտ իցէ քեզ ՚ի  
տանն Աստուծոյ շշէլ . որ է եկեղեցի Աստուծոյ  
կենդանւոյ, սիւն և հաստատութիւն ճշմարտու-  
թեան, . . ա Տի . գ . 15 :

Բատ վորդապէտութեան . սրբոյն Յովհանու-  
ակեբերանի՝ խորհրդական սիւնն եկեղեցւոյ, որ  
ունի հաստատութիւն անվրէպ ճշմարտութեան,  
ընդունի երբէք շարժումն և փոփոխութիւն :

Ըստ յորդորեալ յայսոցիկ առաքելական և  
հայրապէտական բանից՝ համարձակ ասեմք թէ՝  
սուրբ Եկեղեցին ուղղափառաց՝ որ է տուն Աս-  
տուծոյ և ունի զսիւն հաստատուն ճշմարտու-  
թեան, ոչ ընդունի ՚ի վերայ շարժական սեղանոյ  
խորհրդական պատարագս մասուցանել արտաքոյ  
աստուածային . սրբոյ խորանի իւրոյ : Իսկ  
եթէ ոք համարձակեսցի ասել թէ՝ երբեմն  
եղեալ է բանութեամբ և ստիպմամբ հարին ՚ի  
մէջ վանաց պատարագել, գիտացէ այնպիսին  
զի չեղեւ ընդունելի և անխափան սովորութիւն,  
այլ ժողով սուրբ Հարց մերժեալ ըստ պատմու-

թեան Ալիրակոս վարդապետի գանձակեցւոյ ։  
Երե 97 · 102 · այդ ՚ի Առոկ ։

Ո այս հաստատեն բանք Երանելի սուրբ Հայ-  
րապետին մերոյ Ներսէսի շնորհալւոյ և որբոյն  
Գրիգորի նարեկացւոյ հրեշտակակրօն վարդապե-  
տի ։ Առանց նաւակատեաց օրհնութեան և օծ-  
ման՝ լոկ տուն է և ոչ առագաստ և հարսնարան  
բանին Վառուծոյ ։ և այս ոչ միայն այժմ, այլ և  
՚ի հնումն՝ և ՚ի նորումն հաստատեցաւ ՚ի հոգե-  
կրաց անտի այսպէս լինել ։ Յառաջագոյն մաքրիլ  
հոգեորական Երգովք, սաղմոսիւք և օրհնու-  
թեամբ, և օծանել իբրև զեշնոյ և զհարսն ։ և  
ապա արժանաւորիլ Երկնաւոր Փեսային հաղոր-  
դութեան աստուածային խորհրդոյն կատար-  
մամբ ։ Քնուհանք ։

Ա Բանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ-  
Երկնաւ յանդիման արեգական ՚ի սպասաւորու-  
թիւն խորհրդոյ այսը ահաւորութեան ձեռնար-  
կել, Եթէ ոչ ընդ թեօք սորին պահեսցի ։ նա զի  
ոչ Երկնիւք բաւականանայ այս նուէր տէրունի  
մարմնոյ, Եթէ ոչ զայս ձեղուն օրհնութեան  
ծածկոյթ ունիցի ։ վասն զի մահու անիծիւք հեր-  
քի այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս վր-  
կայութեան զաստուածային պատարագն մատու-  
ցանէ ։ մանաւանդ զի պարտաւոր արեան կո-  
չեսցի ։ ՚ի Կարեն ՚ի բանն հէ ։

Առեալ 'ի վարդապետէն լատինացւոց Թառլ  
մայէ աքուխնացւոյ՝ գրէ Յակովը պատրիարք 'ի  
Աթենութեան Կարեկայ . «Արտաքոյ Եկեղեցւոյ  
ոչ է Ճշմարիտ տեղի պատարագի . Թէպէտ Քըր-  
բիստոս արտաքոյ դրանն Արուսաղէմի չարչարե-  
ցաւ, առ 'ի նշանակել թէ Եկեղեցին տարածելի  
էր յոլորտս տիեզերաց . սակայն զևորհրդական  
մարմին և արիւնն իւր 'ի վերնատանն պատարա-  
գեաց, և մեզ պարտէ Քըրիստոսի հետեւիլ յե-  
կեղեցւոջ կատարելով . որպէս և Սիսոդոս պապն  
իդ 'ի Պետրոսէ օրինադրեաց, զի պատարագն  
սուրբ՝ խորհրդանուելը մարմինն Քըրիստոսի՝ ոչ  
յայլ ուրեք օրհնեացի . բայց միայն 'ի վերայ սըր-  
բոյ սեղանոյ» : Աւ թէ «Աթեղօք գործեցելովք ե-  
րեի 'ի տեղւոջն զօրութիւն իմն թշնամւոյն :  
Այլ ինչ տուն աշխարհականաց ազատէ 'ի մե-  
ղաց . ուրեմն ոչ է պարտ բոնադատել զՔըրիս-  
տոս միաբանիլ ընդ բելիարայ . և թէ 'ի սըրա-  
գործեալ Եկեղեցիս մոտանելով . ընկալնու մարդ  
զթողութիւն ներելի մեղաց, և ջերմեռանդա-  
բար աղօթողաց խնդիրն կատարի . :

## Բ Ա Կ Բ :

Հարցանէ Հեղինակն թէ՝ մշոցը մնչ խոր-  
հուրդ ունի : Տե՛ս, առանց խորհրդածութեան  
առյ պատասխանի ինքնահնար այսպէս . Հին սովո-  
րութիւն էր Եկեղեցեաց քրիստոնէից որ սեղա-  
նոյն քովը Ճանձքշելու համար գործիք մը կութ-  
ուէր, և կիսասարկաւագներէն մէկը ա՛ով սը-  
կիհէն հ՛ոռու կըշէր Ճանձերը : Ծետ ժամանա-  
կաց այն գործիքը գեղեցիկայուցին ու Եղեւ այժ-  
մու քշոցը՝ որ մեր Հայաստանեայց Եկեղեցեաց  
գեղեցիկ զարդերէն մէկն է . Երես 4 :

Պարտէ . Հեղինակին առ ՚ի զարժանաւորն տալ  
պատասխանի՝ նկատէ լ ՚ի քշոց զպաս կեր հրեշտա-  
կաց . որով յայտնի սունէ Եկեղեցին, զի հրեշտակը  
մերձ կան սուբբը և ածընկու սեղսնոյն և հանդի-  
անան ՚ի սպասաւորութիւն աստուածոյին խար-  
հրդոյն և ՚ի մատոքանութիւն կենդանարար  
մարմնոյ և արեան Ծիստսի Քրիստոնի : Ուրեմն  
քշոցն խորհրդաւոր օրինակ է հրեշտակաց .  
վասն որոյ գրէ սուլբն ՚ Ա, Երսէս Հորհուլի հայրա-  
բապէտն մեր յԱղբան Եղեսիոյ .

«Օ արծաթեղինս ընդ ոսկեղենին,  
զանօթ պրեյ պատարագին»

զունակ բուրումն անոյ ի խնկին,

զհնչող քշոյն տիպ հրեշոակինս :

Քայս միտս հայի և այս աղօթք պատարագա.  
մատոյց քահ մնային, որ աղօթէ ՚ի դեմ Աստու-  
ծոյ այսպէս . « Տէ՛ր Աստուած մեր, որ կարգեցեր  
յերկինս զշասս և զզինուորութիւնս հրեշտա-  
կաց և հրեշտակապետաց ՚ի սպասաւորութիւնն  
գտաց քոց : Արա այժմ ընդ մուտս մեր մաս-  
նել և սովոր հրեշտակաց, և լինիր պաշտօնակից  
և գտառքանակից քում բարերարութեանդ» .  
՚ի խորհրդադերին :

Ըստ խորհրդական միտս գրէ մեծ հայրա-  
պետն սուրբն Յովան ոսկեբերսն . « Ուշ ամե-  
նայն առաջն անկ սնին վերին զօրութիւնք տե-  
սանելով զրեղեցկութիւն հոսանայն, զի քան  
զմեզ սոսուգապէս նորա մօտեն ՚ի սեղանն և տե-  
սանեն զ Աստուած զօրութիւնքն անմատոյց  
արդիիստիոյլ ճառագայթիւնք» . ՚ի խն ճառի ան հա-  
տորի Անհնութեան Յանձնանետ ՚ի Յարդորակին :

Ահա զայս սքսնչելի խորհուրդ օրինակի՞ր առ-  
միլն հւեշոակին, որ երեւցաւ « Օ պաշարիայ քա-  
հանայի հօրն Յովաննու մկրտչին . զորմէ գրէ  
սրբազնն աւետարանին » Պուկաս . « Եւ եղե ՚ի  
քահայսնանալն նորա ըստ կարգի աւուրցն հասա-  
նելոյ առաջն Աստուծոյ, ըստ օրինակի քահ մնա-  
յութեանն, եհատ նմա խունկ արկանել մտեալ

՚ի տաճարն Տեառն և ամենայն բաղմութիւն  
ժողովրդեանն կային յաղօթս արտաքոյ՝ ՚ի ժամ  
խնկոցն։ ՚ըւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն զի  
կայր ընդ աջմէ սեղանոյ լսնկոցն ։ ։ ։ 8. 11։

՚ըւ սուրբն Աւելակս լամբրոնացի խորհրդով ըզ  
քշոցն յիշէ այսպէս ։ Պարծ է նոցա(սարիաւա-  
գաց)հրամանաւ քահանային կարդալ և քարո-  
չել և վարդապետել և զհաց պատարագին  
ոյատրանտել ։ և զմաղզմայն և զսկիհն և զքշոցն  
բերեն ՚ի սենեկէն ՚ի սեղաննա ։ ՚ի Աւինութեան պա-  
տրաբագի ։

## Բ. Ե. Յ.

արցումն ։ յամարարին զգեստներուն բնա-  
կան նշանակութիւնները ինչ են ։ Տե՛ս, անյար-  
մար հարցմանն զի՞նչ շփոթ և անընդունակ պա-  
տասխան տայ յասելն ։ Վաղաւարտն ու վակասը  
կնքուղի կամ հովուական վեղարի տեղն են գե-  
ղեցկացած ։ վիրուրարը և բազպաներն հին ատե-  
նի հրէից քահանայներուն եվիուտին տեղը և  
շուրջառը կամ նախորտը պատմուանին տեղը ։  
Երես 5 :

Այդ՝ ասացաք թէ անյարմար հարցմանն տայ պատասխանի. վասն զի ժամարարն է պաշտօնեայ հոգեոր և ահեղ խորհրդոյն. ապա նորին զգեստքն հարկաւ ունին հոգեոր նշանակութիւնս և մեկնութիւնս և ոչ մարմնականս. ուրեմն սխալ է հարցումն :

“Ա,ախ՝ պարտ էր ուսանիլ ’ի սրբազան առաքելոյն Պօղոսէ՝ զհոգեոր խորհութս և զբանս համեմատել ընդ հոգեորս և ոչ ընդ բնականս :

“Եւ զոր խօսիմքս՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեամբ բանից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն ընդ հոգեորս զհոգեորս արն համեմատեմքա, ո կորն. բ. 13 :

Ինթերցցի ևս չեղինակն Տետրակին զմեկնութիւն Յովհաննու վարդապետի արձիշեցւոյ, որ արտահանեալ ’ի մեկնութեանց սրբոյն Խոսրովու անձեացեաց եպիսկոպոսի և “Ա,երակսի լամբը բոնացւոյն ’ի վերայ աղօթիցն պատարագամատոյց քահանային գրէ. “Տէ՛ր ամենակալ՝ որ պարզեցեցեր մեզ զնոյն երկնային հանդերձ զգենուլ :

Երկնային հանդերձ զշնորհսն Հոգւոյն սրբոյ ասէ որով զարդարեցաք: Արժանի՛ արա և զիս ’ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո: Որ համարձակիլ և մերձենամ ’ի նոյն հոգեոր պաշտօն փառաց քոց: Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որ է հանդերձ պղծութեան.

և զարդարեցայց ըռւսով քով : Խոնարհութեամբ  
աղերսէ զԱրդին ասելով . Թէպէտ և անպիտան եմ  
՚ի քո ծառայութիւնդ . սակայն՝ դու արժանա  
ւորեա զիս այս հոգեոր պաշտամանս . զի չէ  
մարմնական որպէս հրէիցն, :

Արդ՝ վոսն է՛ր ծածկէ պատասխանատուն  
զիւրաքանչեւր զգեստուց ժամարարին խորհր  
դաւոր տեսութիւնս , զորս բացարայտ ցուցանեն  
ինդրուածք պատարագիչքահանային. և այս իսկէ  
զարմանք, զի Հեղինակն տետրակին ՚ի բայթ թողու  
և փութայ ՚ի հին օրինաց անտի զօրինակս և  
զնմանուին յառաջ բերել , ո՛չ : Իշեալ զշնորհա  
կան և զինքարար օրինացս խորհրդական միտո :

Տե՛ս, զի՞նչ նշանակութիւն ունի սազաւարան .  
Ընւր որբազան առաքելոյն Պողոսի . ո՛վոհեք ըշ  
սաղաւարտն վրկութեանց . ի՞նչ . զ. 17 : ու՞նչ զուք  
զսաղաւարտն յուայն վրկութեանց . ու թուշ, ե . 82

Եւ ՚ի վերայ առաքելական բանիցս վարդա  
պէտէ սուրբն Յովհան ոսկեբերտն այսպէսու. Օ յի  
նովաւ, այս է սաղաւարտիւ հաւատոյ և յուայ  
վրկութեան յապահովացեալք պրծանիմք յա  
մնայն վասնգէու : Լոյա առաքելուկան և հայրա  
պէտական բանից համեմատ է ինդրուածք ժա  
մարարին , որ յընդունիլ զսաղաւարտն ասէ .  
ո՞նի՞ր տէ՛ր սաղաւարտ վրկութեան ՚ի գլուխ  
իմ պատերազմիլ ընդզօրութիւնս թշնամոյնա :

Այսպէս յամենայն զանազան զգեստս ժամանաքը ըին պէսպէս վայելուս և խորհրդաւոր զօրութիւնը տեսանին։

Հետշտակիակրօն սուրբն Պարիզոր նարեկացի խորհրդաբար անուանէ հարսնարան անմահ փէ սային Յիսուսի փրկչին մերոյ զաքանչելին խորհուրդ սրբոյ պատորագինն . ՚ի Կարեւորոյ օրինակն էր հարամանիքն Ամայ գողիլիացւոց . Յովհ . Բ . 12 : Ապա սուրբ խորհրդոյն մերձաւոր հանդիսացեալ քահանայն պարտ է զգենուլ զակատմուճան սուաքին նազարդ փրկութեան և հոգեւոր ուրախութեան զի մի ըռւիցէ զսարսափէլին յանդիմանութիւնն թէ այս նկեր , զի արդ մտեր այսր , զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց , . Յատի . ԲԲ . 12 : Ա ան որոյ ՚ի զգենուլ ժամանաբար քահանային զշապիկն աղեր մէ . Ու գեց՛ տէ՛ր ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան , և շնորջ պատես զգեստով փրկութեանց :

Եւս պարտ է գիտել . զի առաքեալք և յաջորդք նոյզին անուանին հոգեւոր զինուորք ՚ի ընթատուի . զի ունին զերկնաւոր և զնոգէնան զինուորութիւնս առ ՚ի յաղթահարել զգաղթնորո գայթպ տտերազմւանս անեցեալոյթ թշնամոյն հոգեւոց . վասն որոյ գրեալ է . ամենէպէտ և մարմնով գնամք աղը ոչ եթէ ըստ մարմնոյ զինուորիմք . Օ մի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր ։ այլ

Քօրաւոր յԱստուծոյ, բ կորհնլ, ժ 3 ։ 4 :

«Օ այս պատուիրան աւանդեմ քեզ՝ ողդեակ  
իմ Տիմոթէոս ըստ կանխելոյ ՚ի քեզ մարգա-  
րէութեանցն ։ զի դու զինուորիցիս' նոքօք զգե-  
շեցիկ զինուորութիւնն, ։ մ Տի ։ 18 :

Ապա ըստ սրբոյն Բարսղի մեծի հայրապետի  
հոգեոր զինուորաց է՛ հարկ ունիլ և կրել ընդ-  
մէջ սրտի զհոգեորն զբահ ճշմարտութեան հա-  
ւատոյ և արդարութեան, չտալ տեղի ՚ի սիրոս  
և ՚ի միտս աղտեղի և չարախտավատ խորհրդոց ըստ  
այնմ, «Ճաստատուն կացէք ։ զտեղի՝ կալջիք ։  
պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, և զգե-  
ցեալ զզբահսն արդարութեան, ։ Եփե ։ Ղ ։ 14 :

Ուրեմն գոտին ժամարար քահանային՝ զոր ընդ-  
մէջ իւր ընդունի, ունի խորհուրդ հոգեոր զբահի  
ճշմարտութեան, հաւատոյ և արդարութեան ։  
Վասն որոյ զայս աղերս մատուցանէ ժամարարն  
վասն գոտւոյ ։ «Ը ուրջ պատեսցէ կամար հաւա-  
տոյ զմէջս սրտի և մտացս, և շիջուսցէ ՚ի սոյանէ  
զիսորհուրդս աղտեղիս, և զօրութիւն շնորհաց  
քոյ յամենայն ժամ բնակեսցի ՚ի սոսան, ՚ի խորհր-  
դառնար պատարգի ։

Բազպանն՝ զոր ագանի ժամարարն ՚ի բազուկս  
իւր, խորհուրդ ունի աստուածային ամենացան-  
կալի զօրութեանն, որով արժանի լինի քահանայն  
սոսկալի խորհրդոյ անմահարար պատարգին սպա-

սաւորել :

Ապա յընդունիլ ՚ի բազուկ իւր ժամարար քահանային զխորհրդական բազպանն՝ կարէ համարձակ ըստ հոգենուագ մարդարէին Պատթի ասել . և Յաստուծոյ է զօրութիւն իմ , և փառք իմ . Աստուած օգնութեան իմոյ . յոյս իմ է առ Աստուածոյ . յաղ . իտ . 8 :

Ուստի ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի սրբակ մոօք խոստովանիլ հարէ է . « Յաստուծունիմք գանձս զայս յամանս խեցեղէնս . զի առաւելութիւն զօրութեանն իցէ յԱստուծոյ , և ոչ ՚ի մէնջ . բ կրնի . դ . դ :

Վասն որոյ ժամարար քահանայն աղերսէ զկնի ագանելոյ իւր զբազպանն . « Տուր զօրութիւն ձեռին իմոյ և լուա զամենայն աղտեղութիւնս իմ , որպէս զի կարօղ լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ . ՚ի խորհրդապէտն :

Փորուրարն՝ որ արկանի զպարանոցաւ ժամարար քահանային , նշանակէ զարդարացուցիչ շնորհաւետարանական ամենաքաղցր օրինաց Յիսուսի Փրկչին մերոյ . վասն որոյ Յովհաննէս հոգեհանձար վարդապետն մեր արձիշեցի քաղեալ ՚ի մեկնութենէ պատարագի սրբոյն Կերսիսի լամբըրոնացւոյ՝ ասէ . « Ուրար քահանային՝ յայտ առնէ զքաղցր լուծ աւետարանին Քրիստոսի , զոր

բարձրեալ է Երկոքին ուստին :

Այս է խորհրդական զօրութիւն փորուրաբին :  
որ տայ մեզ յիշել զհոգեկեցոյց յօրդորական  
Խրատն ՀՅառուսի թէ ԱՅսայք առիս ամենայն  
վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից  
զձեղ : Այսէք զըւծ իմ ՚ի ձեղ , և ուսարուք  
յինէն՝ զի հեղ եմ և խոնարհ պրախ և գաջիք  
հանգիստ անձանց ձերոց : Օ ի լուծն իմ քաշքը  
և բեռն իմ փոքրոգին . Մատթ . ֆհ . 28 - 30 :

Աթէ կամիս յայտնի ևս տեսանել զբացառ  
ըութիւնս այս շնորհ ց՝ ընթերցիր մատու-  
թեամբ զմեկնութիւն Երանելոյն ՀՅովհաննու-  
ծործորեցւոյ , որ գրէ . ԱՅՆՈՐԴՈՐԱԿԱՆ Ճայ-  
նիւս ոչ զայս անուն և զայն , այլ զամենեսեան  
կըշէ . յորժամ ծանոյց զիւըն էութիւն զիտակ  
զու Հօրն էութեան . Եկայք առիս՝ ասէ , որք ՚ի  
հոգս և ՚ի արամեութիւնս և ՚ի մեզս վշտացեալ  
էք ոչ ՚ի վիշմինդրութեան պահ ոնցումն , այլ  
՚ի մեղաց ջջումն . ոչ յիմ վառաց լրումն , այլ ՚ի  
ձեր վրիութեան կատարումն , վաճան որոյ ասէ՝ Ես  
հանգուցից զձեղ . ուստի , յայտ է ՚ի մեղաց  
վաստակացն բեռանց . քանզի օրինակ իմն մեղքն  
իբր զբեռն ծանր է և վայրաքար , որ ճնշէ զմիւս  
և զմարմնն , ըստ մարդարէին՝ թէ ոնօրէնու-  
թիւնք որպէս բեռն ծանր ծանրացան ՚ի վերայ  
մ . և այլ ամն՝ կըսու կապարեայ և չափ կապարեայ

զնոսա սնուանեաց, յորմէ հանգոյց լինքն առ  
նըով զմեր սխալանս՝ զիւր արդարութիւնն տալով  
մեզ, . ՚ի Ակն. Մաս. յն. 18:

Քաղդսատեսցնեք զին գրական օրէնս ընդ նոր  
շնորհական օրինաց. չունէին հին օրէնք այսպիսի  
շնորհալիք, աւետարանական և փրկարար կո-  
չումն արդարացուցիչ ՚ի սկզբնական մեղաց,  
չունէին և ոչ զլուծ քաղցր աւետարանին ՚ի ը-  
րիստոսի փրկութեան, չունէին զժառանգութիւն  
յաւիտենուկան հանգստեան երկնից արքայու-  
թեան. այլ զի՞նչ. հեծէին ընդ ծանր ծանր բե-  
ռամբ խորական օրինաց: Եւ քանզի զսնազանին  
յայնց խորհուրդ, ծէս և արարողութիւն նոր և  
շնորհական օրինացս հաստատեալ ՚ի սուրբ Անհե-  
ղեցիս, ուստի և ոչ համեմատութիւն ՚ի նոսա  
Ռորեմն պատշաճ է հեղինակն տետրակին գը-  
րելով այսպէս. Ասղաւալտն ու վակասը կնգուղի  
կամ հովուական վեղալի տեղն են՝ գեղեցիսցած  
փորուրարը և բաղպաններն հին ատենի հրեից քա-  
հանայներուն եփուղին տեղը, և շուջառը  
կամ հափորաբ պատմուանին տեղը:

Թմողեալ ՚ի բաց զայս սխալանս, յիշեսցնեք  
զնորհրդական աղօթս ժամարար քահանայն, զոր  
զինի ունելոյ ՚ի պարանոյի զիսրուուրի մատու-  
ցանէ առ ՚իստուած. «Օ գեցո՛ Տէ՛ր պարանոյի  
իմոյ զարդարութիւնն և սրբեա զիբոտ իմ յամե-

նայն աղտեղութենէ մեղաց : 'ի խորհրդագետքի պատրակի :

Շուրջառն՝ զոր զգենու քահանայնըստ սրբոյն  
Պահոնէսիոնի նշանակէ զնելքին պայծառութիւն  
և զմաքրութիւն պաշտաման Երիցութեան և  
ձեւակերպէ զառաքինական բարեկեցութիւն սրտի  
և հոգւոյ արդարացուցիչ ՚ի ժառանգութիւն  
Երկնային փառաց ըստ այնմ : « Երիցունք քո  
զգեցցին զարդարութիւն՝ և սուրբք քո ցնծալով  
ցնծասցեն,, . Ատշ . Ֆլա . 8 :

« Ա բաց մերկանալ ՚ի ձենջ ըստ առաջին գնացիցն զմարդն հին՝ զապականեալն ցանկութեամբ խարէութեան : Եւ նորոգել հոգւովն մտաց ձերոց . և զգենութ զնոր մարդն՝ որ ըստ Վատուծոյն հաստատեալ է՝ արդարութեամբ և սրբութեամբ ձմարսութեան,, . Եփես . դ . 22—24 :

« Օ Երիցունս այսուհետեւ աղացեմ՝ իբրև շերիցակից՝ և վկայ չարչարանացն ՚Բրիստոսի . որ և հանդերձելոցն փառաց յայտնելոց հաղորդ,, . Պետք . Է . 1 :

Վհա՛ յայսոսիկ միտս հային մաղթողական և գոհաբանական բանք ժամարար քահանային . « Տէ՛ր ողորմութեամբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ և պարսպեա՛ ընդդէմ ներգործութեանց չարին : Օ ի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ : Ցնծասցէ անձն իմ ՚ի Տէ՛ր,

զի զգեցոյց ինձ հանդերձ վրկութեան և պատը  
մուռան ուրախութեան ։ իբրև փեսայի եղ ինձ  
պասակ , և որպէս հարսն զարդու զարդարեաց  
զիսո . ՚ի խորհրդագիտորն :

### Բ Ե ' Ժ .

Հարցումն Հեղինակին . Պատարագը քանի  
մաս կը աժանուի ընդհանրապէս : Պատասխանի .  
Երկու գլւաւոր մաս , որ կասուին՝ Պատարագ  
երեխայից , և Պատարագ հաւատացելոց երես :  
Ահա քեզ նոր ինքնահնար և մտացածին վարդա  
պետութիւն , որ ըստ ամենայնի արտաքոյ սուրբ  
գրոց է և հակառակ աւանդութեանց աստուա  
ծաբան հարց սրբոց : Լուր սրբազն առաքելոյն  
Պօղոսի . ։ Շմահպէտ և բաժինք շնորհաց են , այլ  
հոգի նոյն է : Եթէ բաժինք պաշտամանց են ,  
այլ Տէր նոյն է : Եթէ բաժինք յաջողութեանց  
են , այլ Աստուած նոյն է՝ որ յաջողէ զամենայն  
յամենայնի , . ։ կորհ . ֆք . 4—6 :

Յայս միտս գրէ սուրբն Պարիգոր աստուածա  
բան . ։ Աստուած է անբաժանելի և անճառելի  
էութիւն . վասն որոյ և աստուածային խոր-

Հօւրդք են անբաժանելի . թէպէտ ունին զանազան ներգործութիւնս շնորհաց , որպէս է որբարար խորհուրդն հաղորդութեան մարմնոյ և արեան կենարարին մերոյ ՅԱՅԻ Քրիստոսից . Այս արօս

Սոյն օրինակ գրէ սուրբքն ԿԵՐԱԿՈ Համբարձուացի առեալ 'ի սուրբ ՅՈՒՆԱՆ ոսկեբերանէ . « Այս զի նուրբ է խորհրդոյս զօրութիւն , թերեւս կարասցուք յարացուցիւ զսոյն ատուգել : Օ որօրինակ արեգակնոր որ յԵրկինս յառաջին արարչութեանն ատեղծաւ , բայց միշանյն է լուսաւորիչ , և ոչ ոք ասէ 'ի վերջին ժամանակս աղօտայեալ զջօրութիւն ճառագայթից : կամ նուաշեալ . բայց հայեցողքս և ընդունողքս լուսոյն ոչ եմք նոյն , որք 'ի մարմին աշաց զնոյն պարփակեմք . և ոչ ոք ասէ , սյլ արեգակն յԵրեկեանն յայս օրէ օրիշէ , այլ ուխց ընթացից ժամանակին են այլ և այլ , և ոչ նաև որով նորա սահմանին . այսպէս ինձ իման և ըզ մահն . Քայլստոսի և իմանալի արեգակն և լուսաւորիչ մարդկային բնութեանս եղեալ յիւրում ժամանակին , բայց ոչ եթէ յայնժամ եղեւ և այսօր աղօտացաւ զօրութիւն նորա . այլ զոր օքինակ արեգակն անաղօտ է առ վերջինս որպէս յառաջնան , այսպէս և մահն Քայլստոսի անաղօտ կենդանայուցիչ և լուսաւորիչ է մշտ ծնելոց յաշխարհի՝ ըստ որում առաջնոցն , և ոչ հնա-

յաւ . թէպէտ և այլ և այլ են իւրաքանչիւր ժամանակի մարդիկ՝ որ 'ի նմանէ վայելեն , սակայն նա նոյն է և անազօտ կեանք և կենդանաբար . և զրօրինակնա ծածկիլ երկրաւու և դարձեալ նոյն ըստն ծագե օր ըստօրէ՝ և զնաւարն հատանէ , և զհայեցողն լուսաւորէ , այսպէս և սա ծածկի յիմանալի տչաց մերոց , մի նշնե է բաշխեալ . իսկ յորժամ պատարագի նոյն « Քրիստոն » որ երեկ և այսօր , նոյն և յաւիտեանս զիմանալի աշխ հոգ ոց հաւատով հայեցողացն և մերձեցելոցն լուսաւորէ , և զնաւար մեղացն 'ի նմանէ վարատէս . ՚ի Անի . պատրագի :

Ո՞ի՝ գուցէ Հեղինակն աետրակին զարարութիւնս մատուցման սրբարար խորհրդոյ վըր կագործ պատարագին նկատելով , բաժանումն առ պէսպէս արարողութեանց փութայեալ ի ցէ . բայց այն խորհրդաւոր արարողութիւնք ոչ միատեսակ կամ երկտեսակ են , այլ բազմուակակ հանդիսանան . իսկ փրկ սպորտ խորհուրդն անբաժանելի մի է . վասն զի « Քրիստոնի հ Յիսուսի է սրբարար խորհուրդն պատարագի . ուստի ոչ կարեմք բաժանել զնորհուրդն սրբութեան : Կըրեի Հեղինակն աստանօր չէ բնաւ ու շաղիր եղեալ խորհրդաւոր աղօթիցն , զոր առնէ քահանայն 'ի դէմն սրբոյ Կըրորդաւթեան . և ան զի դու ես որ մատուցանես , և մատչիս , և ընդունիս , և ասս « Քրիստոս Աստուած մերտ . ի խորհրդ :

## Բ ԱՌ ԺԵՐ

Հարցումն առնէ Հեղինակն . Ի՞նչ նշանակութիւն ունի քահանային ձեռք լուանալը՝ բեմն ելնելին առաջ : Տայ պատասխանի . Ինչպէս որ սովորութիւն է սեղան նստելին առաջ ձեռք լուանալ , նոյնպէս պէտք է սուրբ և մաքուր սրբախ (որոյ օրինակ է ձեռաց լուացմունքը) սուրբ սեղանոյն մերձենալ . ինչպէս որ կասէ քահանայն . Ի ուացայց սրբութեամբ զձեռս իմ և շուրջ եղջց զսեղանով քով տէր . երեւ 18 :

Ո արմանալ արժան է , զի թէ և հարցումն օրինաւոր է , յասելն՝ Ի՞նչ նշանակութիւնի քահանային ձեռք լուանալը՝ բեմն ելնելին առաջ . սակայն արժան և օրինաւոր լինէր և պատասխանին , եթէ ըստ սուրբ գրոյ և ուղղափառ մեկնչաց պատասխանէր այս օրինակ թէ լուացումն ձեռաց քահանային նշանակէ զսրբութիւնն և ըզմաքրութիւն սրտի ՚ի պէսպէս աղտոց մեղաց յարժանապէս հանդիսանալ առաջին Իշտուծոյ սուրբ սեղանոյն և սպասաւորել սրբարար խորհրդոյն :

Պատ սրբոյն ՚Ա, Երսիսի լամբրոնացւոյն՝ յայս միտս աղաղակէր հոգենուազն ՚Ի աւիթ . թէ՝ ՚Ի ուացայց սրբութեամբ զձեռս իմ և շուրջ եղէց զսեղանով քով Տէր . ՚Եւ այս է հրաման

ասառւ ածային . « Ա ու ապարուք սլրեցարուք , ընկեցէ՛ք զչարիս յանձանց ձերոց » . Եսայ . ա . 16 :

« Ալրեցէ՛ք զձեռս մեղաւորք , և ուղի՛ղ արաբէք զսիրոս՝ երկմիտք » . Յակ . թ . 8 :

Եպա զի՞պիտոյ էր պատասխանառութին ՚ի բաց թողուլ զհոդեոր և զխորհրդական նշանակութիւնս եկեղեցական արարողութեան սուրբ եկեղեցւոյն « Քըլստոսի և ձեռնամուխ լինել մարմնաւոր և մարդկային սովորութեան և տւանդութեան հին օրինաց ծերոց ՚ի մի դասելով զարտաքին և զմարդկային սովորութիւնն ընդ աստուածային շնորհաց և սրբարար ներգործութեանց ՚ի սիրոս և ՚ի հոգիս զզացելոց : Այդեօք չէ ՚ի միտս բերեալ զայն բան ապերտիստ և անիրաւդպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց , զորս հերքելով պապանձեցոյց Տէրն մեր ՀՅԱ · որպէս զրեսրբազան առետարանին Վատթէոս . « Քայնժամ մատեան առ Ծիսուս՝ որ յԱրուսաղէմէ փարիսեցիքն և դպիքք՝ և ասեն : Բնդէ՛ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն . զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց ու տեն : Կա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա · իսկ դուք՝ ընդէ՛ր անցանէք զպատուիրանաւն Վատուծոյ՝ վասն ձերոյ աւանդութեանն , , , ֆէ . 1 — 3 :

## ԲԱՌԵ ԺԱՅԻ

Հարցումն . Սարկաւագը Ա՞ն' ոք յերեխաւ  
յիշասելովը ինչ կուզէ հասկըցընել մասնաւ որա  
պէս : Պատասխանի . Կապապրէ ժողովրդեան (հին  
սովորութիւնը յիշեցնելով) որ մի' գուցէ երե  
խայք , թերահաւատք , ապաշխարօղք և անմա  
քուրք ընծայ բերեն սուրբ սեղանոյն . եթո 54 :

Ու արմանամ , թէ վասն էր պատասխանա  
տուն 'ի բազում տեղիս յիշատակեալ զծէսս և  
զարարողութիւնս հին խարական օրինացաստ հա  
մեմատել ջանայ զնոյնս ընդ շնորհական նոր օրի  
նացս խորհրդոց և արարողութեանց : Երանի թէ  
զբացայացա մեկնութիւն հնովհաննու արձիշեց  
ւոյն ընթերցեալ լիներ , որ արտահանեալ 'ի  
մեկնութեանց սրբոյն լոյսորովու անձեւացեաց ե  
պիսկոսոսի և 'Ներսիսի լամբրոնացւոյն՝ յաղագս  
այսր խորհրդաւոր արարողութեան գրէ . « Օ ի  
միքրիստոս է որպատարագին . անմաքուրքն և աղ  
տեղեալքն հոգւով արտաքս ելցեն . քանզի չեն  
արժան 'ի հոգեւոր ուրախութիւնն վայելել :  
Խորատեսցեն զմիմեանս սուրբ գրովք , և առ  
գրունս աղօթեացեն սգացեալ սրտիւ՝ և ջերմե  
ռանզն արտասուօք ողբացեն զդրկանս . զի 'ի  
հագեւոր հարսանի ացն արտաքս վարեցան , զի չեղեն

արժանի ահաւոր ժաման մերձնալ առ երկնաւոր սեղանն . և ոչ երդոկցիլ հրեշտակացն անզր գումարելոց . և ՚ի ՚Քրիստոս միտնալ խորհրդովն սրբով . և ՚ի մի հոգի նովար ընկիլ . արդ՝ ոք ըստ այսմ խորհրդոյ յեղանելի արտաքս, երկիւ զիւ և ամօթով զեւրեանց սխալանսն առ ՚ի խոս տովանել ունիղին առաջ՝ ՚Պատուծոյ և հաշուժիւն հոյցեն յամենաողորմ ՚Պատուծոյ ՚ի ձեւ որն ՚Քրիստոսի զենմանն՝ փութով քաւութեան հասցենա . ՚ի Ուին . պատարագի :

՚ յորբիկ մեկնութեանս բանց , տե՛ս , ո՞րչսի համեմատ են յորդորական բանիցն սպասաւոք սարկաւոգին , որ ՚ի ոււրբ բեմե անտի ձայնէ առ ժողովւրդն . և ՚Ե՞՛ ոք յերեխայց , մի՛ ոք ՚ի թերահաւատից և մի՛ ոք յապաշխարոշաց մերձեցի յաստուածային խորհուրդաց . ՚ի ժամանելու :

՚Հա այս ամենայն յառաջելականն հոյի բանս խրատուց . . . ՚ յուհետեւ որ ուտիցէ զհայս , կամ ըմպիցէ զբաժակս ՚Տեառն անարժանութեամբ , պարտական եղիցի մարմնոյ և արեան ՚Տեառն : Փորձեայէ՛ մարդ զանձն իւր և ապա ՚ի հացէ անտի կերիցէ , և ՚ի բաժակէն սրբյէ : Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ զատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ , զի ոչ խորի զմարմնն ՚Տեառնա , ակորն . գտ . 27—29 :

## ԲԱՌՆ ԺԳՅ.

Հաշումն . Խնչ է ողջունին խորհուրդը , և  
ինչպէս կտըռուի : Պատասխան . Ենիշեցին չմոռ-  
նար Քրիստոսի տեառն մերոյ այն պատուհը որ  
կասէ . Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի  
վերայ սեղանոյն , և անդ յիշեսցես Եթէ եղբայր  
քո ունիցի ինչ խէթ զքէն , թող զպատարագ քո  
առաջի սեղանոյն . Երթ նախ հաշտեաց ընդ եղբօր  
քում , և ապա Եկեալ մատուցիը զպատարագն  
քո . այսինքն՝ Ուհ որ քու ընծան սեղանի վերայ  
մատուցանես , և այն տեղ միտքդ գայ որ եղբայ-  
րը սրտին մէջ քեզի դէմ բան մը ունի , թող  
քու ընծադ սեղանի առջևը , գնա՞ առաջ հաշ-  
տուե եղբօրդ հետ , ու յետոյ Եկուր՝ ընծայէ  
քու պատարագդ : Ուստի կուզէ որ նբապատարագը  
մատուցանօղներն ալ հաշտ լինին իրարու հետ ,  
ո՞ս չունենան մէկ մէկու դէմ . և անոր նշան՝  
սուրբ սիրով ողջոյն տան իրարու . Երեւ 58 :

Վարձեմ թէ Հեղինակն գոլով զբաղել 'ի բաղ-  
մադիմի պաշտօնականարութիւնս՝ չէ կարողա-  
ցեալ լիշել զսորհրդական միտս բանից ողջու-  
նին , զոր տայ ամենեցուն սրբագործեալ խոր-  
հուրդ անմահարար պատարագին , և չէ իսկ նկա-

տեղալ զողջունաշեր բանս սարկաւագին և ըզ-  
պտտախան ընդունողաց զնուելը ողջունին, մա-  
նաւանդ զգոհաբանական երգս դպրաց : Ա ասն  
զի ողջունաբերն ասէ : « Քրիստոս ՚ի մեջ մեր  
յայտնեցաւ » . և ողջոյնընկալքն գոհանալով ա-  
սեն . « ( ) ընեալ է յայտնութիւնն Քրիստոսին  
Խոկ դպիրքն եղանակեն . « Քրիստոս ՚ի մեջ  
մեր յայտնեցաւ , որ էնն Աստուած աստ բազմե-  
ցաւ , խաղաղութեան ձայն հնչեցաւ , սուրբ ող-  
ջունիս հրաման տուաւ . Ենեղեցիս մի անձնեղե,  
համբոյրս յօդ ըրման տուաւ , թշնամութիւնն հե-  
ռացաւ , սէր յընդհանուրս սիւեցաւ : Եօդ պաշ-  
տօնեայք բարձեալ զձոյն , տո՛ւք օրհնութիւնն ՚ի  
մի բերան միասնական Աստուածութեաննորում  
սրովքէքն են սրբաբանս , ՚ի ժամանեիր :

Աստ սրբոյն ՚ի իոնէսիոսի արիսպագացւոյն  
Ենեղեցական քահանայապետութեան , գլուխ  
գ , « Քրիստոսական ողջոյնն այն հանդիսացուցանէր  
զաքանչելի շքեղութիւնս վառաց սրբազան առա-  
քելոց , որ ՚ի սուրբ սիօն վերնատան անդ , ուր մի-  
աբան և միախուրհուրդ կային . որպէս գրեալ է .  
« Եւ էր երեկոյ ՚ի միաշաբաթւոջ աւուրն՝ և  
շրօք վակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ  
վասն ահին հրեից , եկն Յիսուս՝ և եկաց ՚ի մի-  
ջի նոցա և ասէ ցնոսա , ողջոյն ընդ ձեզ » . Յան  
է . 19 :

Օ այս քրիստոսանուելը ողջունի շնորհն խնդրէք  
տուրբն Պարիդոր նարեկոցի հրեշտակակրօն վար  
դապետն մեր 'ի մասին մասին իւր . և լու վայրագու-  
թիւն օտարացելոյս ողջոյն քոս . 'ի նար . լ :

Ա հա ըստ հետեւեալ խորհրդածութեան 'Ա ել-  
սիաի լամբրոնացւոյն ողջունե մք զմիմեանս . և իրավէս  
ամենայն բարեձեւութիւն ( շկեղեցւոյս հոգեւոր  
է և մարմնաւոր , և մարմնականքն ապացոյց ք և  
յայտնաբանք հոգեւորացն , այսպէս և զայսոսիկ է  
տեսանել զիսորհուրդս . քանզի հպեալ 'ի միմեա-  
նըս մարմնով և շաղկապեալ բազմութիւնն ՚ի  
միութիւն մարմնոյն համբուրիւ , զմիութիւն հա-  
գեպէս խառնմանն և զհաւասարութիւնն այսու-  
յայտ առնեն . ըստ այնում , Պար բազմութեան հա-  
ւատացելոյն սիրտ և անձն մի : Ըւ միանայ ոյլ  
աղագաւ , եթէ ոչ առ 'ի ցուցանել զայն թէ առ  
շնորհ պարդեւաց քոց՝ որ հանդերձեալէ բաշխել՝  
միով յուսով և հաւատով սպասեմք , և որպէս  
զմի անձն համակամութեամբ և սիրով բազմուին  
լինիմք , զի մի լիցի ինչ երկպառակութեան կար-  
ծիք կամ ան ջատումն յուսոյ յառաջիկայս խոր-  
հուրդ . ուստի և նախ հրամանաւն զանկատարն  
և զանջատողական մեղօք բաժանեալս արտաքս եւ  
հան , և ապա կատարելոցս և միով տուփմամբ լցե-  
լոցս առաջ զհրաման ողջունին և սիրոյն միու-  
թեանց . 'ի Անդիութեան պատարագի :

Աւրեմն համարձակ ասեմիշ . քնանուէլը է ոչ  
ջոյնս այս և յառաքելող անտի աւանդեղ ուղար  
զախոռ եկեղեցւոյն Քրիստոսի . « Աղօյն տավար  
մի թանգ ՚ի համբոյր սրբութեանս . շամբ . ծլ . 16 : Կրնի . ծլ . 20 : Բ կորնի . ծի . 12 : ա Պէտր . է . 14 :

Ոյշ այս սռաքելական օրէնք են յաղօթսն ե  
կեղեցին զմիմեանս ողջունել բանիւ և համբու  
րիւ : Այս ՚ի յոյտ առնել զհոգեորսկան սիրոյն  
կապակցութիւնն և զհարազատութիւնն . Եթէ  
ոյք ՚ի Քրիստոս ժողովեցաք . ոչ ոք ՚ի մէջ օտար  
և ոչ խորիժ : Այլ ամենեքեան ազատք . ամենե  
քեան եղբարք միոյ Հօր գոլով որդեիք Աստուծոյ  
և միոյ մօր աւաղանին սրբոյց . Ատրէ . Հարհ . ճառ  
մբ . ա Պէտր . է . 14 :

Աւրեմն ողջունատութեանս այս բանք զա  
նազանեցան ՚ի յաւետարանական բանից անտի  
Ծիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ , որ հրամա  
յեաց առ խպառ բառնալ ՚ի սրտից զատանայա  
կան խէմս և զխոռվութիւնն և հաստատիլ  
յեղբայրական հաշտութիւնն և ՚ի խաղաղու  
թիւնս . « Ձեմէ մատուցանիցես զպատարադ քո  
՚ի վերայ սեղանոյ , և անդ յիշեացեած եթէ եղ  
բայր քո ունի ինչ խէմ զքէն . թող զպատարադն  
քո առաջի սեղանոյն , երթ նախ հաշտեաց ընդ  
եղբօրքում , և ապա եկեալ մատուսջո՞ր զպա  
տարադն քո ամագին . է . 23 . 24 :

“**Ω**ρանս զայս ոմանք առ քահանայսն և եթ  
տաեն ասացեալ՝ որք սեղանոյն են պաշտօնեայք,  
սակայն Ճմարտապէս՝ Հասարակաց ամենեցուն է,  
քանզի պատարագ՝ ոչ միայն զողջակէզն է կար-  
ծեալ՝ որպէս ’ի հինն և կամ ’ի նորս զմարմնոյ և  
արեան Տեառն մերոյ ընծայումն, այլ և զաղօթ-  
ալն, ըստ այնմ՝ Պատարագ օրհնութեան փառա-  
ւոր առնէ . և թէ՝ Համբարձումն ձեռաց խմոց  
պատարագ երեկոյի . և Պօղոս թէ՝ Պատրա-  
տէցէք զմարմնս ձեր պատարագ կենդանի զիսօ-  
սուն պաշտօն ձեր, որպէս զի, և իշխեսցէ ասել  
թող մեզ զպարտս մեր, զի և մեք թողաք մե-  
ղուցելոց մերոց : Խակ այսմ՝ պատարագի սեղան՝  
սիրտն է, յոր ասաց մտանել և աղօթել Տէրն . . .  
Յովհ . Ֆոր . ’ի Մեհն . Առարկ . Ե . 24 . 25 :

## Բ Ա Կ Ժ Դ Ա

Հարցումն առնէ Հեղինակն . Խնչ կնշանա-  
կէ սարկուագին քարոզելը թէ Օդրունս, զդը-  
րունս ամենայն խմաստութեամբ և զդուշուք :  
Պատամսանի տայ . Արովինեաւ պատարագին այս  
մասը բուն խորհրդոյն կատարման մասն է, և

միայն բարեպաշտ հաւատացեալք ներկայ պիտի  
գտնուին անոր և սարկաւագը կպատուիրէ որ  
Եկեղեցւոյն դռները փակ պահուին զգու-  
շութեամբ որպէս զի անարժանները և արդէն  
դուրս ելնողները ներս չմտնեն : « Ա, երսը կեցող-  
ներուն ալ կքարողէ որ իրենց խելքը միտքը  
սուրբ երկիւղիւ առ Աստուած բարձրացնեն .  
Ի վեր ընծայեցուցէք զմիտո ձեր՝ աստուածային  
երկիւղիւ . երեւ 63 :

Եթէ ըստ քերականութեան արուեստին նը-  
կատեմք զայս քարոզ սարկաւագին , յայտնի երեկ  
թէ՝ առաջին բանիցն բացայացտիչ երկրորդ բանն  
այսպէս . « Օ գուշունս զդրունս ամենայն իմաստու-  
թեամբ և զգուշութեամբ , այսինքն՝ ՚ի վեր ըն-  
ծայեցուցէք զմիտո ձեր աստուածային երկիւ-  
ղիւ . քանզի ՚ի սուրբ գերս դուռն փոխանակ  
զգայութեանց դնի :

Երեկի թէ պատամսանատուն չէ՝ Երբէք նը-  
կատեալ զմեկնութիւն սրբոյն « Ա, երսիսի լամբրո-  
նացւոյն . « Օ գուշութիւնն դրանցն , ասէ ,  
յայտառնէ՝ թէ ՚ի խորհուրդ եմք ժողովեալ , առ  
որ ոչ է համարձակելի օտարացն հպել , այլ մի-  
այն մեզ որ համբուրիւս զհամակամութիւն  
հոչակեցաք . արդ Եթէ ոք յայս կցորդութե-  
նէս օտար է , մի՛ հաղորդեացի խորհրդոյս , այլ  
զգուշութեամբ զդրանցդ անկցորդ սմին լիցի :

Այդ թէպէտ և այս մարմնապէս ըստ այսմ կա,  
տարի, սակայն հաւասար այլոցն ունի ընդ ինքեան  
խորհրդոց զօրութիւն, այսինքն զի դրունը և պա-  
տուհանը է առ մեզ զգայարանք մարմնոյս, որ ա-  
ծեն զանազանապէս համբաւս խոռվաթեան ընդ  
ինքեանս ներքինս մարդոյ, որպէս ասաց Երեմիայ.  
Պատուհանքն՝ ընդ որ եմուտ մահ, և Դաւիթ.  
Դիմք Տեհնիք դրանցքերանոյ իմոյ, և Տեր. Առևա-  
կանեակ քո և փակեա զդրունս քո : Այս տայ-  
ձայնիւն զգուշութիւն սարկաւագն՝ թէ այսու-  
հետեւ իմաստութեամբ զգուշոցիք դրանց մարմ-  
նոց ձերոց, աչից և լսելեայ, բերանոյ և շշափե-  
լեաց, զի մի՛ ոք 'ի զոցանէ 'ի սոսկալիս ժամու-  
զգաղեալ՝ խռովութիւնն և մոլորումն մտացն ընդ-  
իւր արացէ : այլ փակեցէ՛ք, ամրացուցէ՛ք, պար-  
պեցէ՛ք, ասէ, իմաստութեամբ և զգուշութեամբ :  
Եւ տե՛ս զիարեոր պահանջումն, զի ոչ միան-  
դամ, այլ երկիցս յաւելու՝ առ 'ի հաստատու-  
թիւն ասացելոցն, գիտելով զի թէ սոքա ոչ  
պապէն, հարկաւորապէս իւրեանց 'ի ծառա-  
յութիւն զիտան ձգեն, և յորժամ միտքն ընդ-  
տրօք զբաղի, և ոչ բնաւ յիմանալի խորհրդոցն  
օգտի : արդ զի մի՛ զոյս աղէտիցս կրեսցուք զկիրա՝  
աղացակէ : զգրունս, զդրունս իմաստութեամբ և  
գիտութեամբ պարսպեցէ՛ք : 'ի Աւին, դադարադի :  
Եւ սուրբն Յօհան ծործորեցի յայս միտու

գրէ . « Անեակ կոչէ զնեքին աշս մտացն՝ յորս  
մտանել հրամայէ և աղօթել, և փակէլ զբուրս՝  
զգայութեանն մասունսքանզի օրինակաւ իմն դը .  
լունք են մտացորպէս ասեն գիրք թէ՝ Կմուտ մահ  
ընդ պատուհանն . զի որպէս ընդ զուռն քաղաքին  
զանազանք ոմանք մտանեն , և ամենեքեան առանց  
խառ ակութեան ՚ի ներքս ՚ի բակին լինին , ոյու-  
տէս և ընդ զգայութիւնս մարդկան աղզի աղզի  
գոյնք և ձայնք , համք և գոլորշիք ՚ի միտսն զեզա-  
նին և առանց շիոթութեան պահին վասն այսորիկ  
զնոսա զդրունս անուանէ . զորս փակէլ ասէ ՚ի  
ժամ աղօթէցնու . ՚ի Մ-ին . Մատթ . զ . 6 :

Դրունք փոխանակ զգայութեանց մերոց .  
« Ի՞նդէ՛ր համբաւեցայց զգայական՝ զիմսատիցս  
գրունս փակեալ , և թէ՝ « Դրունք տեսանե-  
լեաց ներհակաց , մինն ՚ի լաց և միւսն ՚ի վրի-  
պումնու . ՚ի կար . ի և և :

## Բ Ա Ն Ժ Ե .

Հարցումն . Առւրբ սուրբէն ետե քահանային  
ոտած աղօթքը ինչու համար սովորաբար կանոն  
կառաւի , Պատառիսանի . Ա ասն զի պատարագին

գլխաւոր մասը այն աղօթքը կհամարուի, և անոր  
մէջն են սրբագործութեան առաջին և գլխաւոր  
խօսքերը. երես 66 :

Ահա քեզ սխալ հարցմանն և սխալ պատախանին  
երեկի թէ Հեղինակն չէ մտադիր եղեալ քահա-  
նային խորհրդաւոր աղօթիցն, զոր մատուցանէ  
առ Հայր Աստուած գոհաբանելով և յիշառա-  
կելով զհայրախնամ զանբաւ բարեգորովութեան  
զպէսպէս զեղմունս շնորհաց առ մարդկան բնու-  
թիւն բազմատեսակ սփոփիիչ խնամարկութեամբ .  
զորս յայտնի տեսանեմք 'ի բանս նոյն աղօթից, որ  
սկսանի այսպէս . Ա Ասուրը սուրբ սուրբ ես Ճը-  
մարտապէս և ամենասուրբ, և ով ոք պանծացի  
բովանդակել բանիւ զքո 'ի մեզ զանբաւ բա-  
րեգորովութեան զեղմունս . որ և անդէն իսկ 'ի  
նախնումն զանկեալն ընդ մեզօք զանազան եղանա-  
կօք խնամեալ սփոփեցեր մարդարեիւքն, օրինացն  
տուչուք քահանայութ և ստուերակերպ երնջուցն  
մատուցմամբ : Խսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ  
զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խղեալ զդա-  
տակնիք, ետուր մեզ զԱրդիդ քո միածին պար-  
տապան և պարտս, զենումն և օծեալ, գառն և  
և երկնաւոր հաց, քահանայապետ և պատարագ :  
Ա ասն զի ինքնու բաշխող, և նոյն ինքնու բաշխի  
'ի միջի մերում միշտ անծախապէսու . 'ի խորհրդագէ  
Տեսանես, ով Հեղինակդ դասատետրին, յայս

ամենայն բանս աղօթից քահանային ոչ ընաւ կա՞  
նոնական բանք ինչ երեխն, այլ յաւետ գոհու-  
թիւնք և փառաբանութիւնք մատուցեալք առ  
հայրն Աստուած՝ յիշատակելով զմարդասիրական  
զանքաւ բարերարութիւնս նորին և զիրկադործ-  
սքանչելի անօրէնուիս փառակցին իւրոյ և փրկ-  
չին մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Ա յ և սբն Ա, Երսէս լամբրոնացի գրէ ՚ի մեկ-  
նուե սոյն աղօթական բանի. «Ող ցուցեալ է յա-  
ռաջագոյն» զայն այժմ Երկրորդէ՝ թէ ոչ եմք կա-  
բօղեղականքս զարարչե՛՛ ՚ի վերայ մեր նախավինա-  
մուե ճանապարհս կատարելապէս նկատել. ով  
ոք առէ պանծայ զքո գորովոյդ առատապէս զեղու-  
մըն ողորմօւե գրել. արդարեւ ոչ ոք. ըստ այնմ,  
Ա գիտաց զմիտո Տեառն կամ ո՞ւղեւ նմա-  
խորհրդակից . . . Տե՛ս, թէ ո՞ւպէս մերձաւոր  
հարազատութեամբ սկսաւ խորհրդակցել Աս-  
տուծոյ քահանայս, անզուսա ՚ի վերուստ զերախ-  
տեայն յիշատակաց սկիզբն արարեալ՝ որ առ  
մարդիկ : Օ անազան, ասէ, յեղանակօք զմիջա-  
կեալ արտմութեան և մեղաց զբնութիւնս սփո-  
վեցեր . . . Ա չ-ծ և առատ մարդասիրութեանն  
ընի յիշատակիչ առ Աստուած խորհրդովն. զի  
տեսեալ զմեղ ասէ յայսքան վտանգս՝ ոչ անտես  
արարեր ըստ մեղացն, այլ ետուր մեզ փրկիչ, ոչ  
զպատգամաւոր և ոչ զհրեշտակ, այլ զԱրդիդ քո

զմինդ և զմիածինդ , և զուարձացուցեր սիրել  
լեւաւդ զմշուառացեալքս . այն զի եղեւ պարտա-  
պան քէզ ընդ մեր , և զպարտա փոխանակ մերտ .  
՚ի լին . պատարագի :

Ա. ըդ՝ խորհրդաւոր բանք քահանային՝ յայտնի  
եղեն , զի գոհաբանութիւն և փառաբա-  
նութիւն են առ Հայր Աստուած վերառաքեալք  
և ոչ բնաւ տեսանի անդ բան ինչ կանոնական :  
Ապա ուստի ստիպեալ է Հեղինակն երեւակայել  
և կանոն անուանել զիառատրութեան և զգո-  
հաբանութեան աղօթս քահանային :

Ա. ըժան է հարցանել Հեղինակին , թէ յի՞նչ  
միտա կանոն անուանեցեր զայն աղօթիցն բանս .  
չափն ուղղութեան ասի կանոն . ուղիղ լորի  
ճարտարապետաց և ս սսի կանոն . աղիւսակն ժա-  
մակարդութեան և տոմարական գրուածոց կանոն  
անուանի : Աանոն անուանին սաղմուաց և շա-  
րականաց գլխակարդութիւնք . Յովհ . իւասու . յե-  
փշ . պատմ :

Եւս և ՚ի սուրբ ժողովոց սահմանեալ վճիռք  
կանոն են . վասն որոյ հաւաքումն նոցին կոչե գերք  
կանոնաց . նա և աստուածային օրէնք եթէ՛ ե-  
կեղեցական և եթէ՛ քաղաքական բարոյական կա-  
նոն անուանեցան . ըստ այնմ ։ ։ ։ յը մեք ոչ եթէ՛  
յանչափս ինձ պարծեսցուք , այլ ըստ չափոյ կա-  
նոնին : զոր բաժանեաց մեջ Աստուած չափով

Հասանիլ մինչև առ ձեզ և այլն, բ կարէն, գ.  
13—16: Գաղ. շ. 16: Փիլիպ. գ. 11:

Իսկ սուրբ և անմահ պատարագի վայելքաղարդ  
արարողութիւնը և մաղթողական գոհաբանութե  
բանք աղօթից և Երգաբանութիւնք խորհուրդ են  
աստուածային միրկարար շնորհաց և սքանչելի  
որբագործութեան ուստի գոհ Երանելին լիս  
բալ. «Այս է խորհուրդն, զի ոչ ըստ տեսանե-  
լոյն, այլ իմանալոյն է հաւատալն», ՚ի Մեին. պատ:



Արդ՝ ՚ի յաւարտ բանիցս պարտ անձին համարիմ ընթերցասիրաց յայտնել , զի յայսպիսի գրաւոր ձեռնարկութիւնս հարկ է նախ ուշադիր լինել ընթերցուածոց սուրբ գրոց և սրբազան հարց Եկեղեցւոյ ողջամիտ վարդապետութեանց և ապա ձեռնարկել՝ ՚ի բացատրութիւնս և կամ ՚ի համառօտութիւնս աստուածային խորհրդական և սքանչելի բանից շնորհիւ սուրբ Հոգւոյն Ացտուծոյ : «Քանզի և սրբազան առաքեալն Պիողոս ՚ի կարեոր զգուշութիւն և ՚ի իրատ յորդորական՝ կրկնակի գրէ առ Տիմոթէոս սիրելի աշակերտն իւր . «Օ գոյշ լինիցիր անձին և վարդապետութեանդ և ՚ի դմին յամեսօֆիր . զայդ եթէ առնիցես և զանձն ապրեցուացես . և զայնոսիկ՝ որ քեզն լսիցենա : Եւ թէ՝ «Փութասջի՛ր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Ացտուծոյ , մշակ առանց ամօթոյ . ուղիղ համառօտել զբանն ճըշմարտութեան , . ա Տիմ . դ . 16 : Է Տիմ . բ . 15 :

Յայսօրինակ բարոյական յորդորմունս գրէ և սուրբն Աիւրեղ երջանիկ սուրբ հայրապետն Երուսաղէմի . «Եւ ստացի՛ր դու զհաւատուամամբ և պատմութեամբ , և պահեա՞ դու զայն հաւատն , որ ՚ի սուրբ Եկեղեցւոյ աստ վարդա-

պետել որ յամենայն գրոց սրբոց հաստա-  
տեալէա ՚ի կոչ ընծայ գլ ն :

Ապաքէն իրատեալ յառաքելական և ՚ի  
հայրապետական յորդորակաց բանից՝ կատարեալ  
չերմեռանդութեամբ ազաշեցնուք զուրբ Հո-  
գին Վատուած պարզեել զամենաբաւական զե-  
զում շնորհաց խրոց ՚ի միտո և ՚ի հոգիս մեր ։  
զի մի լիցի մեզ սխալ ՚ի բանս վարդապետու-  
թեան սրբազն ասաուածային գրոց այլ անվրէալ  
և ուզիղ համառօտել զբանն ճշմարտութեան ։  
Փութասցնուք միշտ ձայնակից և հազարդ գտա-  
նիլ մաղթողական բանից սրբոյն Պրիգորինա-  
բեկացւոյ հրեշտակակրօն վարդապետին մերոյ ա-  
զաղակելով առ սուրբ Հոգին Վատուած ։ Ա՛ ը-  
նորհէա և ինձ մեղաւորիս խօսել համարձակու-  
թեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց ա-  
ւետարանիդ ։ հետեիլ արագաթուիչ ընթացիւք  
մասց ընդ անհօւն ասպարէզս քոյինաշունչ կտա-  
կարանաց ։ Եւ ՚ի մատչել իմ ՚ի գլուխ հանդիսի  
մէկնութեան բանինախաժամանեացէ առ իս գը-  
թութիւնք ։ խօսելով յիս զարժանն և զպի-  
տանիսն և զհաճոյսն քո ՚ի ժամանակի ՚ի փառա-  
և ՚ի գովեստ Վատուածութեանդքո և ՚ի լրու-  
թիւն շնութեան կաթուղիկէ Եկեղեցւոյ ։ Եւ  
կարկառեա ՚ի մերայ իմ զամենամերձ աջ քո և  
զօրացն զիս շնորհօք գթութեանդքո ։ փարատեա

՚ի մոտաց իմոց զմեց մթութեան մառայութեանց  
ապաքինեալ ընդ նմին զիստւար մղաց , ամբառ  
նալ ուշիւ իմաստից՝ ՚ի կենցաղոյս երկրէ ՚ի  
բարձունս : ՚ ուսաւորեան ՚ի յիս վերստին զծա  
գումն անստուեր հրաշից գիտութեան ՚ ստուտ  
ծութեան քոյժզօր , արժանի լինել առնել և  
ուսուցանել յօրինակ բարեաց աստուածասէր  
լսողաց : ՚ շեղ ամենայն փառք յամենայնից  
ընդ Հօր ամենակաղին և ընդ Արդայդ միածնին և  
բարերարի , այժմ և յանվախճան յաւիտեանս .  
ամենա , ՚ի նաբեկ . 45 . ՀԴ :











5r

1973

2751

«Ազգային գրադարան



NL0029686

2669